ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին 23 հունվարի 2025թ.
ժամը 11:00-ին

2025 թվականի հունվարի 23-ին Վաղարշապատի համայնքապետարանի վարչական շենքքում կայացավ ք.Էջմիածին Կարճիկյան փողոց թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթներ.

Ս.Աղաջանյան - Բացման խոսքով հանդես եկավ քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ Սոնա Աղաջանյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 19.11.2014 թվականի թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, 2025 թվականի հունվարի 23-ին՝ ժամը 11-ին, Վաղարշապատի համայնքապետարանի դահլիճում անցկացվում է «Լուսինե-Կիլիկիա» ՍՊԸ-ին պատկանող Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին Կարճիկյան փողոց թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկման 1-ին փուլը: Առավել մանրամասն կներկայացնի նախագծի ճարտարապետ Արա Մարտիրոսյանը ;»- ներկայացրեց Ս. Աղաջանյանը:

Ա.Մարտիրոսյան - Նախագծի ճարտարպետ Ա.Մարտիրոսյանը ներկայացրեց, որ 8474քմ տարածքում նախատեսում են կառուցել բազմաբնակարան բնակելի շենք 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով: «Վերգետնյա առաջին հարկը իրենից ներկայացնում է հասարակական սպասարկման տարածք (խանութներ,գրասենյակային տարածքներ,մանկական ժամանցի կենտրոններ և այլն):Նախագիծը իրենից ներկայացնում է երկու շենք, բաղկացած է հինգ մասնաշենքից: 1-ին և 2-րդ մասնաշենքը միացված են իրար, իսկ 3-րդից 5-րդ մասնաշենքերը իրար: Քաղաքաշինության նորմերը պահպանելով շենքը արտաքին տեսքով և նյութերով նման են հարակից նորակառույց շենքերին, որպեսզի կառույցները դառնան համալիր շինություններ:

Բազմաբնակարան շենքում նախատեսվում է կառուցել 358 բնակարան, բնակարանները սկսվում են 66քմ-ից մինչև 147քմ:
Մշակվել է յուրօրինակ բակային համակարգ՝ տեսանելիությունը դեպի հարավ, պարզ տեսանելիությամբ դեպի Արարատ լեռը: Բակային տարածքում կառուցվելու են զրուցարաններ, խաղահրապարակներ, ֆուտբոլի դաշտ: Յուրաքանչյուր մասնաշենք ներառում է երկու վերելակ՝ բեռնատար և մարդատար:
Շենքի արտաքին տեսքը երեսպատված է լինելու բազալտե սալիկներով, իսկ ճակատային հատվածը՝ կոմպոզիտ նյութերով:
Բոլոր բնակարանների համար նախատեսվում է տեղադրել անհատական կաթսաներ: Կաթսաները տեղադրվելու են արտաքին պատերի վրա՝ քողարկված:
Բոլոր բնակարանները ունեն պատշգամբ:

Ավտոկայանատեղի համար նախատեսվում է 1 ստորգետնյա հարկ, քանի որ տեղանքի գրունտային ջրերի բարձր մակարդակով պայմանավորված հնարավոր չէ 1-ից ավել ստորգետնյա հարկերի կառուցումը: Ավտոկայանատեղին նախատեսված է 75 ավտոմեքենայի համար:

Ստորգետնյա հարկում առկա է լինելու պոմպակայան, ինչպես նաև կենցաղային և խմելու ջրի համար նախատեսվում է 2 տարբեր բաքեր: Ստորգետնյա հարկը դիտարկվում է նաև որպես ապաստարան, ապահովված է լինելու սանհանգույցով:
Շենքը սեսմակայուն է, համապատասխանում է բոլոր նորմերին, կայունությունը հաշվարկված է 9 - բալի հաշվարկով:

Տարածքի կանաչապատման տոկոսը համապատասխանում է բոլոր նորմերին:

Հարց ու պատասխան.

Արդյո՞ք ավտոմեքենաների կայանատեղին բավարար քանակով կկարողանա սպասարկել բնակիչներին:

Նախագծի զեկուցող Ա.Մարտիրոսյանը հայտնեց, որ դրսում նույնպես կայանատեղի կլինի, որը կկարողանա ապահովել բնակիչների ավտոմեքենաների կայանումը առանց որևէ խնդրի:

Հավելյալ հարցերի բացակայության հիմքով հանրային քննարկումն ավարտվեց:

<u>Որոշում.</u>

Ամփոփելով հանրային քննարկումը՝ մասնակիցները հավանության արժանացրին ք.Էջմիածին Կարճիկյան փողոց թիվ 2 հասցեում նախատեսվող 1 ստորգետնյա 12 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերը: Որոշվեց այն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

Ձեռնարկող՝ Վաղարշապատի համայնքապետարան

Քննարկման վարող՝ Ս. Աղաջանյան

Արձանագրող՝ Մ. Պողոսյան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով: